ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 25-ին, հինգշաբթի, Մայր Աթոռում սուրբ պատարագի մատուցմամբ, եկեղեցական արարողություններով և գրական հանդեսով նշվեց տոնը «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոյ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Ազգային-եկեղեցական մեծ տոնի առթիվ, Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա, եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ է մատուցում Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արբահամյանը:

«Հայր մեր»-ից առաջ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Մայր Տաճարի ավագ բեմի առաջ, կատարվում է հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»:

Սրբոց Վարդանանց օրը տոնն է նաև Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի անվանակոչության:

Հանդիսավոր սուրբ պատարագի վերջում, Իշման Ս. Սեղանի առաջ, քարոզում է պատարագիչ սրբազանը՝ «Հաւատոյ զինու վառեալ Մամիկոնեան զօրավարին, յաշխարհօրէն պատերազմին ախոյեանն Եկեղեցւոյ» բնաբանով, հանգամանորեն կանգ առնելով Վարդանանց պատերազմի և Ղևոնդյանց քահանաների նահատակության գլխավոր դեպքերի վրա, Ավարայրի ճակատամարտի հաղթական ելքը որոշող բարոյաքաղաքական, հոգևոր-մշակութային և այլ ազդակների վրա և հայ ժողովրդի կյանքում Վարդանանց հերոսների թողած մեծ և անմոռանալի հիշատակի վրա: Քարոզի վերջում սրբազանը սրտագին բարեմաղթություններ է անում Վեհափառ Հայրապետի թանկագին կյանքի արևշատության, Մայր Աթոռի պայծառության և Մայր Հայրենիքի հզորության և խաղաղության համար:

Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք: Մայր Տաճարում ներկա եղող հավատացյալները, ակնածանքով համբուրելով Վեհափառ Հայրապետի Ս. Աջը, շնորհավորում են Նրա անվանակոչության տոնը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ծաղկյա դահլիճ, որտեղ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը հանուն միաբանության շնորհավորում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը:

Վեհափառ Հայրապետը, խորապես զգացված Իր անվան տոնի առթիվ արտահայտված սրտագին շնորհավորություններից և բարեմաղթություններից, Իր խոսքի վերջում օրհնում է Հայոց Ազգը, Հայաստանյայց Եկեղեցին, Հայրենի երկիրը և խաղաղություն, շինություն է բարեմաղթում ողջ աշխարհին:

Վեհափառ Հայրապետի անվան տոնի առթիվ ստացվել էին նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր:

Ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկույթ Ճեմարանի ուսանողության կողմից՝ նվիրված Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց խնկելի հիշատակին:

Պետական Հիմնի նվագից հետո, վերատեսուչ սրբազանը կատարեց հանդեսի բացումը: Ուսանողության կողմից կատարվեցին օրվա տոնը ոգեկոչող խմբերգեր, մեներգեր, արտասանություններ, ընթերցվեցին ճառեր:

Վարդանանց տոնի ազգային-եկեղեցական նշանակության նվիրված բովանդակալից զեկուցումով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս պր. Պարգև Շահբազյանը:

Ս. Ղևոնդյանց քահանայից և Վարդանանց մարտիկների հիշատակի ոգեկոչման նվիրված գրական երեկույթը վերջացավ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և ուսանողության ուղղած հայրական խրատակոչով:

ՀԱՅ. ԵՂԵՌԵՑԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ ... Բիբլիոթեկա